

Արևիկոս Զյուրա

ԳԱՎՐԻՈՇ



Վիկտոր Հյուզո

ԳԱՎՐՈՇ

սատմվածք

Հատված «Թշվառներ» վեպից



ՅԱՐՈՂՐԱՏ

Երևան — 2014

Հյուզո, Վիկտոր

Գավրոշ: [Պատմվածք]: Դպր. կրտսեր տարիքի համար / Վ. Հյուզո: Ֆրանս. թարգմ.՝ Ա. Բլբուլյան, նկ.՝ Դ. Դուբինսկի: Էլեկտրոնային տարբերակը կազմեցին և հրատարակութայան պատրաստեցին Մ. Մ. Յավրուհրատ, Տ. Ս. Հարությունյանը, տառատեսակը՝ Ռ. Թարումյանի (Արիան Գրքի).— Եր.: [Յավրուհրատ](#), 2014.— 28 էջ: Հրատարակութայան հիմքում՝ Գավրոշ: [Պատմվածք]: Դպր. կրտսեր տարիքի համար / Վ. Հյուզո: Ֆրանս. թարգմ.՝ Ա. Բլբուլյանը, նկ.՝ Ռ. Ս. Բաբայան.— Եր.: Սովետ. գրող, 1986.— 28 էջ հրատարակութունից:

Ֆրանսիացի հուշակավոր գրող Վիկտոր Հյուզոյի «Թշվառներ» վեպի (1862) այս հատվածը պատմում է անապաստան տղայի՝ Գավրոշի մասին:

© Յավրուհրատ, 2014

Բոլոր իրավունքները պահպանված են:

Այս հրատարակութայան ցանկացած ձևով և եղանակով (էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման և այլն) մասնակի կամ ամբողջական վերարտադրութունը, տարածումը, պահպանումը որոնողական համակարգերում առանց հրատարակչի գրավոր թույլտվութայան արգելվում է:

Հեղինակի այս գործը հանրային սեփականութուն է և ենթակա չէ հեղինակային իրավունքների հայտնի սահմանափակումների: Այս գիրքը նախատեսված է միայն անձնական օգտագործման համար:

Վիկտոր Հյուզո, 1802-1885

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանչուկը

Առաջին մաս

Երկրորդ մաս

Ծանոթագրություններ

ՄԱՆՉՈՒԿԸ

Փարիզն ունի իր երեխան, անտառն՝ իր թռչունը. թռչունը՝ ճնճղուկն է, երեխան՝ անօթևանը:

Այդ փոքրիկն ուրախ է: Միշտ չէ, որ նա ուտելու բան ունի, բայց եթե խելքին փչի, ամեն երեկո ներկայացում կգնա: Նա ոչ շապիկ ունի հագին, ոչ կոշիկ՝ ոտքերին և ոչ էլ տանիք՝ գլխավերևում: Նա նման է ճանճի, որը նույնպես ոչինչ չունի: Նա, մոտավորապես, յոթից-տասներեք տարեկան է, ապրում է իր նմանների հետ, թափառում փողոցներում, գիշերում բաց երկնքի տակ, հագնում է հոր հին շալվարը, որը կրունկներից էլ ներքև է իջնում, դնում է մինչև ականջները հասնող մի հնամաշ գլխարկ, վազվզում է, դարան մտնում, ողորմություն խնդրում, ժամանակ վատնում, ծխամորճ ծխում, հաճախում գինետները, ճանաչում է գողերին, խոսում է ժարգոնով, երգում անպարկեշտ երգեր, բայց սրտում ոչ մի վատ բան չունի:



ՓՈՔՐԻԿ ԳԱՎՐՈՇԸ



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Մոտավորապես 1832 թվականին, Տամպլի¹ ծառուղում և Շատո-դ'Օ-ի² շրջակայքում կարելի էր հանդիպել տասնմեկ-տասներկու տարեկան մի փոքրիկ տղայի, որը վերը նկարագրված անօթևան երեխայի իսկական նմանակն էր: Ինչ-որ մարդիկ գթասիրությունից դրդված նրան ցնցոտիներ էին տվել, մինչդեռ նա հայր և մայր ուներ: Սակայն հայրը նրա մասին չէր մտածում, իսկ մայրը նրան չէր սիրում: Նա մեկն էր առավել շատ կարեկցանքի արժանի այն բոլոր երեխաներից, որոնք ունեն հայր և մայր, սակայն, այդուհանդերձ, որբ են:

Այդ երեխան ոչ մի տեղ իրեն այնքան լավ չէր զգում, որքան փողոցում: Սալահատակը նրա համար ավելի փափուկ էր, քան իր մոր սիրտը:

Ծնողները նրան ոտքի մի հարվածով նետել էին կյանքի հորձանուտը: Եվ նա պարզապես դուրս էր թռել:

Նա աղմկարար, ծաղրասեր, աշխույժ և հիվանդոտ տեսքով մի տղա էր: Գնում էր, գալիս, երգում, խաղում, մտնում ջրափոսերի մեջ, մի քիչ գողություն անում, բայց զվարթորեն՝ ինչպես կատուններն ու ճնճղուկները: Նա ոչ օթևան ուներ, ոչ հաց, ոչ կրակ, ոչ սեր, սակայն ուրախ էր, որովհետև ազատ էր:

Բայց և այնպես, երբեմն պատահում էր, որ երկու կամ երեք ամիսը մեկ անգամ այդ երեխան ասում էր ինքն իրեն. «էհ, գնամ մայրիկիս տեսնեմ»: Այդ ժամանակ նա թողնում էր ծառուղին, կրկեսը, Սեն-Մարտենի դարպասը, իջնում էր գետափով, անցնում կամուրջներն ու արվարձանները և հասնում էր 50-52 կրկնակի համարը կրող Գորբոյի

խարխուլ տանը: Այդ ժամանակներում Գորբոյի տանը, որի ճակատին փակցված էր «Վարձով տրվող սենյակներ» ազդագիրը, ապրում էին բազմաթիվ մարդիկ, որոնք բոլորն էլ պատկանում էին չքավոր դասին:

Այդ խարխուլ տանն ապրող բնակիչներից ամենաթշվառը, չորս հոգուց բաղկացած մի ընտանիք էր՝ հայրը, մայրը և արդեն բավականին մեծ երկու աղջիկները: Զորան էլ ապրում էին ձեռնահարկում:

Դա այն ուրախ, փոքրիկ թափառաշրջիկի ընտանիքն էր: Նա այստեղ էր գալիս և տեսնում էր աղքատություն: Եվ ավելի ցավալին այն էր, որ այդ տանը ոչ ոք չէր ժպտում, սառն էր օջախը, սառն էին սրտերը: Երբ ներս էր մտնում, նրան հարցնում էին. «Որտեղի՞ց ես գալիս»: «Փողոցից»,— պատասխանում էր նա: Երբ գնում էր, հարցնում էին. «Ո՞ւր ես գնում»: «Փողոց»,— պատասխանում էր նա: «Ինչո՞ւ ես եկել»,— հարցնում էր նրան մայրը:

Սակայն երեխային այդ ամենը չէր վշտացնում և այդ վերաբերմունքի համար նա ոչ ոքի չէր մեղադրում: Իրականում նա չգիտեր էլ, թե ինչպիսին պետք է լինեն իսկական ծնողները: Ի դեպ, մայրը քույրերին սիրում էր:

Մոռացանք ասել, որ Տամպլի ծառուղում այդ երեխային անվանում էին փոքրիկ Գավրոշ:

II

Մի երեկո Գավրոշը բարձրանում էր Ֆոնտենբլոյի ուղեկալի ուղղությամբ: Մութ գիշեր էր: Երեխան գունատ էր, նիհար, ցնցոտիներ հագած, փետրվար ամսին՝ քաթանե շալվարով, և ձայնը գլուխը գցած երգում էր:

Փողոցի անկյունում մի պառավ կին կռացած աղբակույտն էր քչփորում: Երեխան անցնելիս դիպավ նրան և ետ-ետ գնալով՝ բղավեց.

— Ա՛յ քեզ բան, իսկ ես սրան մի խոշոր շան տեղ դրեցի:

Խոշոր բառը նա արտասանեց հեգնական շեշտով՝ ԽՈՇՈՐ շուն:

Պառավ կինը կատաղած ուղղվեց.

— Եթե կուսցած չլինեի, ոտքով մի լավ կհասցնեի:

Բայց երեխան արդեն բավականին հեռացել էր:

Նա շարունակեց ճանապարհը և վերսկսեց երգը:

Հանկարծ նա կանգ առավ, որովհետև հասել էր 50-52 կրկնակի համարը կրող տանը: Դուռը փակ էր և նա սկսեց ոտքով ուժեղ հարվածել, դղրդացնելով ողջ տունը:

Այդ ժամանակ, այն նույն պառավ կինը, որին Գավրոշը հանդիպել էր փողոցի անկյունում, աղմուկ-աղաղակով վազում էր նրա ետևից:

— Սա ի՞նչ է, սա ի՞նչ բան է: Դուռը կոտրում են, տունը քանդում են:

Հանկարծ պառավը կանգ առավ: Նա ճանաչել էր տղային:

— Այդ դու ե՞ս, սատանի ճուտ:

— Տես է, նույն պառավն է,— ասաց երեխան:— Բարև, Բյուրգոնմյուշ: Եկել եմ նախնիներիս տեսնելու:

Պառավը դեմքը ծամածռելով պատասխանեց.

— Ոչ ոք չկա, անպիտան:

— Վա՛հ,— զարմացավ երեխան,— իսկ որտե՞ղ է հայրս:

— Ֆորսում³:

— Ինչպե՞ս, իսկ մա՞յրս:

— Սեն-Լազարում⁴:

— Լավ, իսկ քույրե՞րս:

— Մադլոնետում⁵:

Երեխան քորեց ծոծրակը, նայեց տիկին Բյուրգոնին և ծոր տվեց.
— Աա՛ա՛...

Ապա շրջվելով՝ հեռացավ, և մի րոպե անց դռան շեմին կանգնած պառավը լսեց, թե նա ինչպես էր երգում իր զնգուն մանկական ձայնով՝ խորանալով ձմռան քամուց դողացող սև ծփիների մեջ:

III

Մի երեկո, երբ սառը քամի էր փչում, փոքրիկ Գավրոշը ցնցոտիների մեջ դողացնելով, հափշտակված կանգնել էր վարսավիրի կրպակի առջև: Թվում էր, թե նա հիանում է ցուցափեղկի ետևից անցորդներին ժպտացող պտտվող տիկնիկով, բայց իրականում զննում էր կրպակը, որպեսզի այնտեղից մի կտոր օճառ թուցներ և այնուհետև մեկ սուռով⁶ վաճառեր արվարձանի որևէ սափրիչի:

Վարսավիրը, լավ տաքացված իր կրպակում, սափրում էր մի հաճախորդի և մերթ ընդ մերթ խեթ-խեթ հայացքներ նետում այդ թշնամու՝ ձեռքերը գրպանները մտցրած, սառած և համառ ստահակի վրա:

Մինչ Գավրոշը տիկնիկն էր զննում, իրենից փոքր երկու երեխա՝ մեկը յոթ, մյուսը հինգ տարեկան, մտան խանութ և աղերսալի շշուկով ինչ-որ բան խնդրեցին: Երկուսն էլ միաժամանակ էին խոսում, և հեծկլտոցները խլացնում էին փոքրիկի ձայնը, իսկ մեծի ատամները ցրտից կափկափում էին: Վարսավիրը բարկացած շրջվեց և առանց ածելին ցած դնելու, երկուսին էլ դուրս արեց ու դուռը փակելով ասաց.

— Դատարկ բանի համար գալիս են և մարդկանց սառեցնում:

Երեխաները լաց լինելով շարունակեցին քայլել:

Սաստիկ անձրև էր սկսվել:

IV

Գավրոշը վազեց և կտրեց նրանց ճանապարհը:

— Զեզ ի՞նչ է պատահել, պատիկներ:

— Զգիտենք որտեղ գիշերենք,— պատասխանեց մեծը:

— Այդքան բա՞ն,— ասաց Գավրոշը:— Շա՛տ մեծ բան է: Մի՞թե դրա համար լալիս են:— Եվ հովանավորողի մեղմ շեշտով ասաց.

— Դե, եկեք ինձ հետ:

— Լավ, պարոն,— ասաց մեծը:

Երկու երեխաները հետևեցին Գավրոշին: Նրանք այլևս լաց չէին լինում:

Գավրոշը երեխաների հետ Սենտ-Անտուան փողոցով գնաց Բաստիլի⁷ ուղղությամբ: Երեխաներն իրար կպած գնում էին նրա ետևից:

Հացթուխի կրպակի մոտով անցնելիս, Գավրոշը շրջվեց.

— Այսօր ճաշե՞լ եք, երեխաներ:

— Պարոն,— պատասխանեց մեծը,— առավոտից ոչինչ չենք կերել:

— Ուրեմն ոչ հայր ունեք, ոչ մայր,— արժանապատվությամբ շարունակեց Գավրոշը:

— Ներեցեք, պարոն, հայր և մայր ունենք, միայն չգիտենք, որտեղ են նրանք:

— Երբեմն դա ավելի լավ է, քան իմանալը,— ասաց Գավրոշը:

— Փողոցների անկյուններում ուտելիք գտնելու հույսով երկու ժամ շարունակ քայլում էինք, սակայն ոչինչ չգտանք,— շարունակեց մեծը:

— Գիտեմ,— ասաց Գավրոշը,— ամեն ինչ շներն են ուտում:

Եվ մի փոքր լռելուց հետո շարունակեց.

— Այդպես ուրեմն, ծնողներին կորցրել եք, չգիտեք, թե որտեղ են

նրանք: Այդպես, իհարկե, չպետք է լիներ, պատլիկներ: Հիմարություն է մեծերից այդպես հեռանալը:

Եվ այլևս ոչ մի հարց չտվեց: Գիշերելու տեղ շունենալ: Դրանից ավելի պարզ էլ ի՞նչ կարող էր լինել:

Այդ ժամանակ նա կանգ էր առել և արդեն մի քանի րոպե էր, ինչ շոշափում և քրքրում էր ցնցոտիների բոլոր ծակուծուկերը:

Վերջապես նա հաղթական տեսքով գլուխը բարձրացրեց, և գրպաններից մեկից մեկ սու հանելով՝ ասաց.

— Հանգստացեք, փոքրիկներ, ահա սրանով կարելի է երեք անգամ ճաշել:

Գավրոշը փոքրիկներին առաջ հրելով մտավ հացթուխի կրպակը և սուն հաշվեսեղանի վրա դնելով՝ բղավեց.

— Մատուցո՛ղ, հինգ սանտիմի⁸ հաց:

Հացթուխը, որը նաև կրպակի տերն էր, մի հաց ու դանակ վերցրեց:

— Երեք կտոր արեք, մատուցող,— ասաց Գավրոշը և արժանապատվությամբ ավելացրեց.— երեք հոգի ենք:

Տեսնելով, որ հացթուխը երեք ընթրողներին զննելուց հետո սև հաց վերցրեց, Գավրոշը զարմացած բացականչեց.

— Այդ ի՞նչ էք անում:

Հացթուխը պատասխանեց.

— Ինչպե՞ս թե ինչ, սա էլ հաց է, երկրորդ տեսակի շատ լավ հաց:

— Ուզում եք ասել՝ սև հաց,— ասաց Գավրոշը հանգիստ, սառը արհամարհանքով:— Սպիտակ հաց, մատուցո՛ղ, ես հյուրասիրում եմ:

Հացթուխը չկարողացավ զսպել ժպիտը և սպիտակ հացը կտրելիս, կարեկցանքով նայում էր նրանց, որից Գավրոշը խիստ վիրավորվեց:

— Հը, ի՞նչ էք մեզ այդպես զննում,— ասաց նա:

Երբ հացը կտրված էր, հացթուխը սուն գցեց դարակի մեջ, իսկ Գավրոշը երկու երեխաներին ասաց.

— Կերե՛ք:

Եվ ամեն մեկին մի կտոր հաց տվեց:

Այն կտորը, որը մյուս երկուսից ավելի փոքր էր, Գավրոշը իրեն վերցրեց:

Խեղճ երեխաները, ինչպես և Գավրոշը, շատ քաղցած էին: Հացն իրենց սպիտակ ատամներով պոկոտելով, նրանք կանգնել էին կրպակում, և հացթուխը, որին արդեն վճարել էին, կատաղած նրանց էր նայում:

— Գնանք փողոց,— ասաց Գավրոշը:

Նրանք նորից բռնեցին Բաստիլի ճանապարհը:



V

Քսան տարի առաջ Բաստիլի հրապարակում դեռ կարելի էր տեսնել արտասովոր մի արձան:

Այդ արձանը փայտից ու քարից սարքած փղի մակետ էր, որի մեջքի մասը կարծես աշտարակ լիներ՝ մռայլ, խորհրդավոր ու ընդարձակ:

Արձանն արդեն ավերվում էր: Նրան բոլորովին մոռացության էին մատնել: Նա այնտեղ էր, իր անկյունում, մռայլ, հիվանդ, խարխուլ, շուրջը՝ փտած ցանկապատ, իսկ սրունքների արանքում՝ բարձր բուսած խոտ էր:

Գավրոշը երկու փոքրիկներին տարավ հրապարակի հազիվ լուսավորված այդ անկյունը:

Հասնելով հսկայի մոտ, Գավրոշն ասաց.

— Զվախենաք, պստլիկներ:

Ապա ցանկապատի արանքից ներս մտավ և օգնեց փոքրիկներին, որ նրանք էլ անցնեն: Երեխաները, մի քիչ սարսափած, անձայն հետևում էին Գավրոշին, որն իրենց հաց էր տվել և ապաստան խոստացել:

Այնտեղ, ցանկապատի երկայնքով մի սանդուղք էր դրված, որը ցերեկը ծառայում էր հարևան շինարարության բանվորներին: Գավրոշն այն բարձրացրեց և հենեց փղի առջևի ոտքերից մեկին: Հսկայի փորի վրա ինչ-որ անցք էր երևում, որին Գավրոշը հասավ մի ակնթարթում, առանց սանդուղքից օգտվելու: Նա այնտեղ մտավ այն օձի նման, որը սողոսկում է ճեղքի մեջ, և մի ընդմեջ անց երեխաները տեսան նրա գլուխը, որը երևաց մութ անցքի եզրին:

— Դե,— բղավեց Գավրոշը,— վեր բարձրացեք, մանկիկներ, և կտեսնեք, թե որքան լավ է այստեղ: Առաջ դու բարձրացիր,— ասաց նա մեծին,— ես քեզ կօգնեմ:

Մեծը ուսկի դիմեց: Փոքրը, տեսնելով, որ եղբայրը բարձրանում է, իսկ ինքը մենակ է մնում այդ հսկա կենդանու ոտքերի արանքում, ուզեց լաց լինել, բայց չհամարձակվեց:

Մեծը բարձրանում էր սանդուղքի աստիճաններով, իսկ Գավրոշը բացականչություններով քաջալերում էր նրան.

— Մի՛ վախենա: Ա՛յ, այդպես: Շարունակի՛ր: Ոտքդ դի՛ր այնտեղ: Զեռքդ՝ այստե՛ղ: Համարձա՛կ:

Եվ երբ երեխան արդեն անցքի մոտ էր, Գավրոշը ուժեղ բռնեց նրա թևից և դեպի իրեն քաշեց:

— Վե՛րջ,— ասաց նա:

Փոքրիկն անցքից ներս էր մտել:

— Հիմա,— ասաց Գավրոշը,— սպասեք ինձ, պարոն, նեղություն քաշեք, նստեք:

Եվ անցքից դուրս գալով այնպես, ինչպես ներս էր մտել, սահեց փղի ոտքի վրայով, թռավ, կանգնեց խոտերի մեջ, հինգ տարեկան փոքրիկի մեջքից բռնեց, և բարձրացնելով, նրան դրեց սանդուղքի մեջտեղը, իսկ ինքը սկսեց նրա ետևից բարձրանալ՝ ձայն տալով մեծին.

— Ես նրան կհրեմ, իսկ դու՝ քաշիր:

Մի ակնթարթում փոքրիկին բարձրացրին, հրեցին, ձգեցին, քաշեցին և խցկեցին անցքի մեջ: Գավրոշը նրա ետևից ներս մտնելով, կրունկի մի հարվածով հրեց, գցեց սանդուղքն ու բացականչեց.

— Ահա և հասանք: Փոքրիկներ, դուք իմ տանն եք:

Գավրոշն իսկապես իր տանն էր:

VI

Այն անցքը, որից ներս էր մտել Գավրոշը, դրսից հազիվ նկատելի մի ճեղք էր և այնքան նեղ, որ միայն կատուններն ու երեխաները կարող էին անցնել:

Հանկարծակի լուսավորությունը երեխաներին ստիպեց կկոցել աչքերը: Գավրոշը պատրույգը վառել էր:

Գավրոշի հյուրերը նայեցին իրենց շորս կողմը: Նրանք մի վիթխարի կմախքի մեջ էին:

Ամենափոքրը կիսաձայն ասաց.

— Մու՛թ է:

Երկու երեխաները մոտեցան Գավրոշին:

Գավրոշը, շոյված այդ վստահությունից, դիմեց ամենափոքրին.

— Հիմարիկ,— ասաց նա,— դրսում է մուլթ: Դրսում անձրև է գալիս, իսկ այստեղ անձրև չկա, դրսում ցուրտ է, իսկ այստեղ քամու նշույլ անգամ չկա, դրսում շատ մարդ կա, իսկ այստեղ ոչ ոք չկա, դրսում նույնիսկ լուսին չկա, իսկ այստեղ իմ մոմն է վառվում... Դե, շարժվեք, — ասաց նա և երեխաներին հրեց սենյակի խորքը:

Այնտեղ նրա անկողինն էր:

Գավրոշի անկողինը լրիվ էր: Այսինքն, նա ուներ մի ներքնակ, մի վերմակ և վարագույրներով ծածկված մի անկողնախորշ:

Ներքնակը խսիրից էր, վերմակը գորշ, կոպիտ բրդից, շատ տաք և գրեթե նոր: Անկողնախորշը պղնձալարից հյուսված մի ցանց էր, և Գավրոշի անկողինը կարծես վանդակի մեջ լիներ:

Ահա այդ ցանցն էլ ծառայում էր որպես վարագույր:

Գավրոշը ցանցի երկու ծայրերը ետ քաշեց:

— Դե, փոքրիկներ, չորեքթաթ արեք,— ասաց նա:

Եվ զգուշությամբ իր հյուրերին մտցրեց վանդակի մեջ և նրանց ետևից ներս սողալով, բացվածքը փակեց: Երեքն էլ պառկեցին խսիրի վրա: Գավրոշը շարունակում էր պատրույզը պահել ձեռքում:

— Իսկ հիմա,— ասաց նա,— քնե՛ք:

— Պարոն, սա ի՞նչ է,— ցանցը ցույց տալով, հարցրեց եղբայրներից մեծը:

— Սա առնետների համար է,— հպարտորեն ասաց Գավրոշը:— Քնեք:

Խոսելու հետ մեկտեղ, նա վերմակի մի ծայրով ծածկեց ամենափոքրին, որը մրմնջաց.

— Օ՛, ի՞նչ լավ է, ի՞նչ տաք է:

Գավրոշը գոհունակ հայացք գցեց վերմակի վրա:

— Սա բուսաբանական այգուց է,— ասաց նա,— կապիկներից եմ վերցրել:

Եվ մեծ եղբորը ցույց տալով խսիրը, որի վրա նա պառկած էր՝ ավելացրեց.

— Սա էլ ընձուղտինն էր: Այս բոլորը կենդանիներինն էր: Ես դրանք վերցրեցի: Նրանք ամենևին չբարկացան: Ես նրանց ասացի, որ փղի համար եմ տանում: Ահա և բոլորը:

Երկու խեղճ երեխաները, որոնք ամբողջովին թրշվել էին, սկսում էին տաքանալ:

— Ուշադրություն,— ասաց Գավրոշը,— երբ պառկում են՝ պետք է քնեն: Քնե՛ք:

Եվ ճրագը հանգցրեց:

VII

Հազիվ էին լույսը հանգցրել, երբ մի ահավոր ցնցում սկսեց տարուբերել այն ցանցը, որի տակ պառկել էին երեք երեխաները:

Հինգ տարեկան փոքրիկ տղան, լսելով այդ աղմուկը և այլևս վախին չդիմանալով, համարձակվեց դիմել Գավրոշին.

— Պարո՞ն:

— Հը՞,— ասաց Գավրոշը, որը նոր էր աչքերը փակել:

— Այս ի՞նչ բան է:

— Առնետներն են,— պատասխանեց Գավրոշն ու նորից գլուխը դրեց բարձի վրա:

Իսկապես, փղի կմախքի ներսում հազարավոր առնետներ էին վխտում: Նրանք խմբերով վերև էին բարձրացել և օղակներն էին կրծում:

Փոքրիկը վախից չէր կարողանում քնել:

— Պարոն,— կրկին խոսեց նա:

— Հը՞,— ձայնեց Գավրոշը:

— Իսկ առնետն ի՞նչ է:

— Մուկ է:

Այս բացատրությունը մի քիչ հանգստացրեց երեխային: Նա սպիտակ մկներ տեսել էր և չէր վախեցել: Սակայն կրկին խոսեց.

— Պարո՞ն:

— Հը՞,— կրկնեց Գավրոշը:

— Իսկ ինչո՞ւ կատու չեք պահում:

— Մեկն ունեի,— պատասխանեց Գավրոշը,— մի հատ բերել էի, բայց նրանք կերան:

Փոքրիկն սկսեց դողալ: Խոսակցությունը վերսկսվեց շորրորդ անգամ:

— Պարո՞ն:

— Հը՞:

— Ո՞ւմ կերան:

— Կատվին:

— Իսկ ո՞վ կերավ կատվին:

— Առնետները:

— Մկները՞:

— Այո, առնետները:

Երեխան, ապշած կատուներ ուտող այդ մկներից, շարունակեց.

— Պարոն, իսկ այդ մկները մե՞զ էլ կարող են ուտել:

— Իհարկե,— պատասխանեց Գավրոշը:

Երեխայի սարսափը հասել էր գագաթնակետին: Բայց Գավրոշը
ավելացրեց.

— Մի վախենա, նրանք չեն կարող ներս մտնել: Եվ հետո, ես
այստեղ եմ: Ահա, բռնի՛ր ձեռքս, լռի՛ր և քնի՛ր:

Գավրոշը բռնեց երեխայի ձեռքը: Փոքրիկն իրեն սեղմեց այդ ձեռքը
և ավելի ապահով զգաց:

Ձայների աղմուկից առնետները վախեցել և փախել էին: Մի քանի
րոպե հետո նրանք նորից վերադարձան և վերսկսեցին մոլեգնել, բայց
երեք փոքրիկները խորասուզվել էին քնի մեջ և այլևս ոչինչ չէին
լսում:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Երկու տարվա ընթացքում Փարիզը մի քանի ապստամբություն էր տեսել: Սովորաբար, խռովության ժամանակ, ապստամբած թաղամասերից բացի ոչ մի բան այնքան խաղաղ չի լինում, որքան Փարիզի տեսքը: Ընդհանրապես, երբ ապստամբությունն սկսվում է, երբ լսվում է թմբուկի ձայնը, զորակոչը, ընդհանուր հավաքը, կրպակավաճառը սահմանափակվում է ասելով.

— Ինչպես երևում է, Սեն-Մարտեն փողոցում ծեծկռտուք պետք է լինի:

Կամ՝

— Սենտ-Անտուան արվարձանում:

Հաճախ էլ անտարբերությամբ ավելացնում է.

— Այն կողմերում, ինչ-որ տեղ:

Երբ խռովությունը մոտենում է, նա շտապ փակում է խանութը և արագ-արագ հագնում է համազգեստը, այսինքն, ապահովում է իր ապրանքը, իսկ անձը դնում է վտանգի տակ:

Ինչ-որ խաչմերուկում կրակում են, բարիկազներ են գրավում, կորցնում և նորից են գրավում, արյունը հոսում է, գնդակները սպանում են մարդկանց, սալահատակի վրա դիակներ են կուտակվում: Իսկ այդտեղից մի քանի փողոց այն կողմ լսվում է սրճարաններից եկող բիլիարդի խաղազնդակների աղմուկը:

Մինչդեռ 1832 թվականի հունիսի 5-ին, երբ զենքի դիմեցին, մեծ քաղաքը վախեցավ: Ամենուր, նույնիսկ ամենահեռավոր թաղամասերում դռները, լուսամուտները և կրկնափեղկերը

փակվեցին օրը ցերեկով: Քաջերը զինվեցին, վախկոտները թաքնվեցին: Շատ փողոցներ ամայի էին, ինչպես առավոտյան ժամը չորսին:

Երեկոն իջավ, սակայն թատրոնները չբացվեցին, պարեկները շրջում էին փողոցներում և խուզարկում անցորդներին:

Մարդիկ թաքնվում էին տներում, կանայք ու մայրերն անհանգստանում էին:

Լավեց թնդանոթի առաջին կրակոցը: Բոլորը շտապեցին փակել դռները:

Բոլորը միաբերան ասում էին. «Ինչո՞վ է վերջանալու այս ամենը»:

II

Ցնցոտիավոր մի երեխա իջնում էր Մենիլմոնտան փողոցով: Հնավաճառի կրպակի մոտով անցնելիս զանազան հնոտիների մեջ նկատեց մի հին ատրճանակ և բղավեց.

— Վաճառող, ես ձեզնից փոխ եմ առնում այս զենքը:

Եվ ատրճանակը վերցնելով փախավ:

Երկու ըոպե անց, սարսափահար փախչող բուրժուաների ամբոխը հանդիպեց մի երեխայի, որը ատրճանակը թափահարելով՝ երգում էր.

Բան չեմ տեսնում գիշերը,

Լավ եմ տեսնում ցերեկը...

Դա փոքրիկ Գավրոշն էր, որը պատերազմելու էր գնում: Սակայն մեծ եղավ նրա հիասթափությունը, երբ ծառուղով անցնելիս նկատեց, որ ատրճանակը շնիկ չունի:

Սեն-Փան շուկայում Գավրոշը միացավ մի խմբի, որը ղեկավարում էին Անժուրան, Կուրֆեյրակը, Կոմբֆերն ու Ֆոյին: Նրանք այնքան էլ լավ չէին զինված:

Գալիս էին նրանք առանց փողկապների, առանց գլխարկների,

շնչակտուր, անձրևից թրջված, բայց աչքերում՝ կրակ: Գավրոշը հանգիստ կտրեց նրանց ճանապարհը:

— Ո՞ր եք գնում:

— Դու էլ արի,— ասաց Կուրֆեյրակը:



Նրանց ետևից մի աղմկալի թափոր էր գնում, դրանք ուսանողներ էին, արվեստագետներ, բանվորներ, նավահանգստի աշխատողներ՝

գինված մահակներով ու սվիններով, իսկ ոմանք էլ, Կոմբֆերի նման, գոտկատեղի մեջ խրած ատրճանակներ ունեին: Մի մեծահասակ մարդ, որը շատ ծեր էր երևում, քայլում էր այդ խմբի հետ: Նա ոչ մի գենք չուներ և շտապում էր ետ շմնալ: Գավրոշը նկատեց նրան.

— Ո՞վ է սա,— հարցրեց նա Կուրֆեյրակին:

— Ծերունի է:

Խումբը շարժվում էր Վեռրի փողոցով: Փոքրիկ Գավրոշը քայլում էր առջևից և ձայնը գլուխը գցած երգում էր:

Նրանք գնում էին դեպի Սեն-Մերի:

Խումբը մեծանում էր ամեն վայրկյան: Շուտով նրանք անցան Սեն-Մերին և չիմանալով թե ինչպես, հայտնվեցին Սեն-Ինի, իսկ հետո՝ Շանվրերի փողոցում:

III

Բարիկադի համար հիանալի տեղ էր ընտրված՝ փողոցի լայն մուտքը, որի ծայրում փակուղի էր, իսկ այդ փակուղու խորքում գտնվում էր Կորնթոս գինետունը:

Բազմության ներխուժումից ամբողջ փողոցը սարսափի էր մատնվել: Աջ ու ձախ, կրպակները, լուսամուտները, ձեղնահարկերը, բոլոր տեսակի կրկնափեղկերը, ներքևի հարկից մինչև տանիքները, բոլորը փակվեցին: Բաց էր միայն Կորնթոս գինետունը. խումբն այնտեղ էր հավաքվել:

Գինետան ցանկապատված առաջնամասից մի քանի ընկերներ դուրս քաշեցին քսան երկաթաձող, քանդեցին սալահատակի բոլոր քարերը, դուրս քաշեցին հարևան տան ճակատի գերանները: Փողոցի կեսը կտրված էր մարդու հասակից էլ բարձր պատնեշով:

Փողոցի ծայրով երկու սպիտակ ձի լծած մի հանրակառք անցավ:

Բոսյունեն ցատկեց սալաքարերի վրայով, վազեց, կանգնեցրեց կառապանին, ուղևորներին իջեցրեց, ազատ արձակեց

տոմսավաճառին և վերադարձավ, բերելով կառքն ու սանձերից բռնած ձիերին:

Մի վայրկյան հետո, ազատ արձակված ձիերը հենց այնպես գնում էին, իսկ մի կողմի վրա շուռ տված հանրակառքը ամբողջացնում էր փողոցի պատնեշը:

Անձրևն արդեն կտրվել էր: Նոր մարդիկ էին եկել: Բանվորներն իրենց վերնաշապիկներով փաթաթած մի փոքր տակառ վառող և փամփուշտներով լիքը մի սնդուկ էին բերել: Ապստամբները կոտրեցին Շանվրերի փողոցի միակ լապտերը, ինչպես նաև Սեն-Դնի և հարևան փողոցների բոլոր լապտերները:

Միաժամանակ երկու բարիկաղ էին կառուցում, երկուսն էլ հենվում էին Կորնթոս գինետան վրա: Այնտեղ մոտավորապես հիսուն աշխատող կար, որոնցից երեսունը զինված էին հրացաններով:

Գինետան խոհանոցում ապստամբները կրակ էին վառել և գնդակների կաղապարների մեջ ձուլում էին սափորները, գդալները, պատառաքաղները, մի խոսքով, գինետան ամբողջ անագե սպասքը:

Գավրոշն աշխատում էր մեծ բարիկաղի վրա:

Նա մեծ ոգևորությամբ իր վրա էր վերցրել կազմակերպչական գործը: Նա գնում էր, գալիս, բարձրանում, իջնում, կրկին բարձրանում, աղմկում: Թվում էր, թե նա եկել էր բոլորին քաջալերելու համար: Միշտ նրան էին տեսնում, ամենուրեք նրա ձայնը լսում:

Միաժամանակ ամեն տեղ լինելով՝ նա լցնում էր օդը:

Անդադար շարժում կար նրա փոքրիկ բազուկներում և անվերջ աղմուկ՝ նրա փոքրիկ թոքերում:

— Դե, համարձակ: Էլի՛ սալաքարեր, էլի՛ տակառներ: Ձեր բարիկաղը շատ փոքր է: Ամեն ինչ դրեք այնտեղ, մտցրեք, ամեն բան խցկեք: Քանդեք տունը: Ահա, վերցրեք այս ապակեպատ դուռը:

— Ապակեպատ դուռ: Ի՞նչ անենք այդ ապակեպատ դուռը:

— Ապակեպատ դուռը հիանալի բան է,— առարկեց Գավրոշը:— Հարձակվելիս այն, իհարկե, խոչընդոտ չի հանդիսանա, բայց կխանգարի գրավելիս: Ապակեպատ դուռը կկտրի ազգային գվարդիայի զինվորների ոտքերի կոշտուկները, երբ նրանք ուզենան բարիկադի վրա բարձրանալ: Է՛հ, դուք բոլորովին երևակայություն չունեք, ընկերներ:

Այս ամենի հետ մեկտեղ ասենք, որ Գավրոշը խիստ բարկացած էր առանց շնիկի իր ատրճանակի պատճառով: Նա մեկից մյուսի մոտ էր գնում և պահանջում. «Հրացան, ես հրացան եմ ուզում: Ինչո՞ւ ինձ հրացան չեք տալիս»:

— Հրացա՞ն, քե՞զ,— ասաց Կոմբֆերը:

— Իսկ ինչո՞ւ ոչ,— բացականչեց Գավրոշը:

Անժուրան թոթվեց ուսերը:

— Երբ տղամարդկանց հերիքի, երեխաներին էլ կտանք,— ասաց նա:

Գավրոշը հպարտորեն շրջվեց և պատասխանեց.

— Եթե ինձնից շուտ սպանվես՝ քոնը կվերցնեմ:

— Լակո՞տ,— նետեց Անժուրան:

— Դեղնակտո՞ւյց,— պատասխանեց Գավրոշը:



IV

Երկու բարիկադները կառուցելուց և դրոշը դնելուց հետո գինետնից մի սեղան բերեցին: Կուրֆեյրակը բարձրացավ սեղանի վրա: Անժուրան բերեց մի քառակուսի արկղ, որը Կուրֆեյրակը բացեց: Արկղը լի էր փամփուշտներով: Երբ փամփուշտները տեսան, բոլորը մի րոպե լռեցին:

Կուրֆեյրական սկսեց դրանք բաժանել:

Ամեն մեկն ստացավ երեսուն փամփուշտ: Շատերը վառող էլ ունեին:

Ինչ վերաբերում է վառողի տակառին, ապա այն դրված էր առանձին սեղանի վրա, դռան մոտ, դա պահում էին որպես պաշար:

Բոլորը միասին լցրեցին հրացաններն ու կարաբինները, առանց շտապելու, հանդիսավոր լրջությամբ: Անժուրան գնաց, որ բարիկազների մոտ երեք ժամապահ նշանակի:

Բարիկազները կառուցելուց, պահակակետեր նշանակելուց, հրացանները լցնելուց և ժամապահներ դնելուց հետո միայնակ մնալով այդ վտանգավոր փողոցներում, որտեղով այլևս ոչ ոք չէր անցնում, այդ խավարի և լռության մեջ, մեկուսացված, զինված, վճռական ու հանգիստ, նրանք սպասեցին:

Կառավարությունն առանց շտապելու իր ուժերն էր հավաքում: Այդ հիսուն հոգին սպասում էր վաթսուն հազարին:

Անժուրան անհամբեր էր դարձել: Նա գնաց Գավրոշին գտնելու:

— Դու փոքր ես,— ասաց նա,— քեզ չեն տեսնի: Դուրս եկ բարիկազներից, սահիր տների երկայնքով, մի քիչ շրջիր փողոցներում և վերադարձիր ու ասա ինձ, թե ինչ է կատարվում այնտեղ:

Գավրոշն ուղղվեց:

— Նշանակում է փոքրերն էլ ինչ-որ բանի պիտանի են, դա շատ լավ է: Ես գնացի:

Փոքրիկը զինվորական ողջույն տվեց և զվարթորեն դուրս եկավ մեծ բարիկազի ելքից:



V

Գավրոշը վերև էր նայում և կարծես ինչ-որ բան էր փնտրում:
Հանկարծ նա մի լապտեր նկատեց:

— Ինչպե՞ս,— ասաց նա,— այստեղ դեռ լապտերներ կա՞ն:
Խանգարում եք կարգը, բարեկամներս: Սա անկարգություն է,
հարկավոր է կոտրել:

Եվ քարով խփեց լապտերին, որի ապակիներն այնպիսի աղմուկով

Թափվեցին, որ դիմացի տան վարագույրների ետևում կուչ եկած բուրժուաները բղավեցին.

— Ահա իննսուներեք թվականը...

Լապտերը հանգավ: Փողոցը միանգամից մթնեց:

— Այ, այդպե՛ս, ծեր փողոց,— ասաց Գավրոշը,— հագիր գիշերային զգեստդ:

Հանկարծ Գավրոշը կանգ առավ:

Դարպասի ետևում նա մի ձեռնասայլակ էր նկատել, որի մեջ մի օվերնցի էր քնած:

Գավրոշն այս աշխարհի գործերի մասին ունեցած իր փորձից հասկացավ, որ օվերնցին հարբած է:

— Այս սայլակը շատ հարմար կլիներ մեր բարիկազի վրա,— մտածեց Գավրոշը:

Օվերնցին խռմփացնում էր:

Գավրոշը զգուշությամբ քաշեց սայլակի ետևից, իսկ օվերնցուն՝ առջևից, այսինքն ոտքերից, և մի ընդհանուր հետո օվերնցին անխռով ննջում էր սալահատակի վրա:

Սայլակն ազատ էր:

Գավրոշը միշտ ամեն ինչ ունենում էր մոտը: Նա քրքրեց իր գրպանները և այնտեղից դուրս բերեց մի ճմռթված թուղթ ու կարմիր մատիտի մի կտոր, որն, ըստ երևույթին, որևէ հյուանից էր թուցրել և գրեց.

«ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

«ՍՏԱՅԱ ՔՈ ՍԱՅԼԱԿԸ»

Եվ ստորագրեց.

«ԳԱՎՐՈՇ»

Այդ անելուց հետո նա թուղթը դրեց օվերնցու գրպանը և,

հաղթական դղրդոցով սայլակն առաջ հրելով, շատ արագ հեռացավ:

Սակայն դա շատ վտանգավոր էր: Այնտեղ մի պահակակետ կար, որը գրավել էին արվարձանում գտնվող գվարդիայի զինվորները: Գավրոշն այդ մասին մոռացել էր: Սայլակը հրելով նա հանկարծ դուրս եկավ մի համազգեստի, շակո գլխարկի⁹ և մի հրացանի դեմ:

Գավրոշը երկրորդ անգամ կանգ առավ:

— Ա՛,— ասաց նա,— հենց ինքն է: Բարև, հասարակական կարգ:

Բայց Գավրոշի զարմանքը կարճ տևեց:

— Ո՞ւր ես գնում, լակո՛տ,— բղավեց սերժանտը:

— Քաղաքացի,— ասաց Գավրոշը,— ես ձեզ դեռ բուրժուա չեմ անվանել: Ինչո՞ւ եք ինձ վիրավորում:

— Ես քեզ հարցնում եմ, ո՞ւր ես գնում, անպիտան:

Գավրոշը պատասխանեց.

— Դուք շատ սիրալիր եք խոսում:

— Ո՞ւր ես գնում: Ո՞ւր ես գնում, ավազակ:

Գավրոշը պատասխանեց.

— Ինչպիսի՛ խայտառակ խոսքեր:

Սերժանտը սվինն իջեցրեց ուսից:

— Վերջապես ասելո՞ւ ես, թե ուր ես գնում, թշվառական:

— Իմ գեներալ, գնում եմ կնոջս համար բժիշկ փնտրեմ, նա ծննդաբերելու է:

— Ի գե՛ն,— բղավեց սերժանտը:

Գավրոշը մի հայացքով գնահատեց իրավիճակը:

Այն պահին, երբ սերժանտն ուզում էր հարձակվել, Գավրոշն ամբողջ ուժով հրեց սայլակը, որը կպնելով սերժանտին, վերջինիս մեջքի վրա գցեց առվի մեջ, իսկ հրացանը կրակեց օդում:

Գավրոշը, որը գժի նման վազում էր, կանգ առավ այնտեղից հինգ-վեց փողոց այն կողմ և շնչասպառ նստեց սահմանաքարի վրա:

— Բայց այսպես ես շեղվում եմ ճանապարհից,— ասաց նա,— հարկ կլինի նորից մի պտույտ կատարել:

Այս ասելով, նա կրկին սկսեց վազել:

VI

Արդեն լրիվ մթնել էր, բայց դեռ ոչ մի բան չէր կատարվել: Փամը տասն էր: Անժուրան և Կոմբֆերը կարաբիները ձեռքներին նստել էին բարիկաղի մուտքի մոտ: Նրանք չէին խոսում և ականջ էին դնում, ջանալով որսալ նույնիսկ ամենախուլ և ամենահեռավոր ոտնաձայները:

Հանկարծ այդ մռայլ հանգստության մեջ մի պարզ, ուրախ մանկական ձայն լսվեց, որը «Լուսնի լույսի տակ» հին ժողովրդական երգի մոտիվներով երգում էր աքաղաղի կանչով վերջացող այս երգը.

Քիթս արցունքովել է,
Բյուժո¹⁰ բարեկամ,
Ժանդարմներիդ փոխ տուր ինձ,
Որ խրատեմ ես նրանց:
Շինելը կապույտ,
Գլխարկը կոկարդով—
Ահա արվարձանը,
Ծուղրուղո՛ւ...

Անժուրան և Կոմբֆերը իրար ձեռք սեղմեցին:

— Գավրոշն է,— ասաց Անժուրան:

— Նա մեզ նախազգուշացնում է,— ասաց Կոմբֆերը:

Արագ վազողի ոտնաձայները ցնցեցին ամայի փողոցը, և ծաղրածուից էլ ճարպիկ Գավրոշը բարձրանալով ծանրակառքի

վրա և շնչասպառ բարիկադի ետևն անցնելով՝ ասաց.

— Հրացանս, նրանք այստեղ են:

Էլեկտրական հոսանք անցավ ամբողջ բարիկադով մեկ և լավեցին հրացանները փնտրող ձեռքերի շարժումները:

— Ուզու՞մ ես իմ կարաբինը,— ասաց Անժուրան փոքրիկին:

— Մեծ հրացանն եմ ուզում,— պատասխանեց Գավրոշը:

Գավրոշի հետ միևնույն ժամանակ վերադարձել էին նաև երկու ժամապահները:

Ամեն մեկը գրավել էր իր մարտական դիրքը:

Քառասուններեք ապստամբներ, որոնց թվում նաև Անժուրան, Կոմբֆերը, Բոսյուեն, Բահորելը և Գավրոշը դիրքավորվել էին մեծ բարիկադում: Վեց մարդ տեղավորվել էին Կորնթոսի երկու հարկերի լուսամուտների մոտ:

Անցավ ևս մի քանի վայրկյան, ապա հստակորեն լավեցին համաչափ ու ծանր բազմաթիվ ոտնաձայներ: Այդ աղմուկը, սկզբում՝ թույլ, հետո՝ հստակ, դանդաղ մոտենում էր խաղաղ ու՝ ահավոր շարունակությամբ: Այդ ձայնից բացի, ոչինչ չէր լսվում և չէր երևում:

Տիրեց մի կարճատև դադար, կարծես երկու կողմերն էլ սպասում էին: Հանկարծ այդ խավարի միջից մի ձայն բղավեց.

— Ո՞վ կա այդտեղ:

Անժուրան թրթռացող ու խիստ շեշտով պատասխանեց.

— Ֆրանսիական հեղափոխությունը:

— Կրա՛կ,— բղավեց ձայնը:

Ու մի զարհուրելի որոտ պայթեց բարիկադի վրա: Կարմիր դրոշն ընկավ:

Համազարկն ուժեղ էր: Գնդակները վիրավորեցին բազմաթիվ մարդկանց: Գրոհն ամենի էր: Պարզ էր, որ գործ ունեին ամենաքիչը մի ամբողջ գնդի հետ:

— Ընկերներ,— բղավեց Կուրֆելյրակը,— զուր տեղը վառող չփչացնեք: Հակահարված տալու համար սպասենք, մինչև նրանք մտնեն փողոց:

— Իսկ ամենից առաջ,— ասաց Անժուրան,— կրկին բարձրացնենք դրոշը:

Նա վերցրեց ոտքերի տակ ընկած դրոշը:

Լսվում էր, թե ինչպես էր զորամասը լցնում հրացանները:

Անժուրան շարունակեց.

— Այստեղ ո՞վ է ամենաքաջը, ո՞վ բարիկադի վրա կրկին կկանգնեցնի դրոշը:

Ոչ ոք չպատասխանեց: Բարիկադի վրա բարձրանալը հավասարազոր էր մահվան: Անժուրան ինքն էլ ցնցվեց: Նա կրկնեց:

— Ոչ ոք չի՞ ուզում:

Հանկարծ նրանք տեսան մի ծերունու, որը հայտնվեց գինետան շեմին:

Նա գնաց դեպի Անժուրան, խլեց նրա ձեռքից դրոշը և երերացող գլխով, սակայն հաստատուն քայլերով, սկսեց դանդաղ բարձրանալ բարիկադի վրա պատրաստված աստիճաներով: Պատկերն այնքան մոայլ էր և այնքան վեհ, որ բոլորը միաբերան բղավեցին. «Հանեցե՛ք գլխարկները»: Նրա սպիտակ մազերը, ճաղատ ու կնճռոտ լայն ճակատը, փոս ընկած աչքերը, կարմիր դրոշը վեր բարձրացրած ծերունական բազուկը կարծես խոշորացել էին լապտերի կարմիր լույսի տակ և թվում էր, թե տեռորի դրոշը ձեռքին գերեզմանից դուրս է եկել 93 թվականի ուրվականը:

Երբ նա արդեն վերջին աստիճանի վրա էր, այդ հազար երկու

հարյուր հրացանների ներկայութեամբ ուղղվեց, ծածանեց դրոշը
և բղավեց.

— Կեցցե՛հ հեղափոխութիւնը, կեցցե՛հ հեղափոխութիւնը:
Եղբայրութիւն, հավասարութիւն կամ մահ:

Նույն ձայնը, որը բղավել էր «Ո՞վ կա այդտեղ», գոռաց.

— Հեռացե՛ք այդտեղից:

Ծերունին, գունատ, լուսավորված բիբերով, դրոշը ճակատից վեր
բարձրացրեց և կրկնեց.

— Կեցցե՛հ հանրապետութիւնը:

— Կրա՛կ,— հրամայեց ձայնը:

Բարիկաղի վրա պայթեց երկրորդ համազարկը:

Ծերունին բաց թողեց դրոշը և բերանքսիվայր ընկավ սալահատակի
վրա:

Նրա տակ արյան առվակներ հայտնվեցին: Նրա ծերունական,
գունատ և տխուր գլուխը թվում էր, թե երկնքին է նայում:

Ապստամբները հարգալիր սոսկումով մոտեցան դիակին:

— Քաղաքացիներ,— ասաց Անժողրան,— ահա մի օրինակ, որ
ծերերը տալիս են երիտասարդներին: Մենք տատանվում էինք, իսկ
նա եկավ, մենք նահանջում էինք, նա առաջ գնաց: Ահա թե
ծերութիւնից դողացողները ինչ են սովորեցնում նրանց, ովքեր
վախից դողում են:

Անժողրան կռացավ, բարձրացրեց ծերունու գլուխը և խիստ
տեսքով համբուրեց նրա ճակատը, հետո հանեց նրա վերնաշապիկը
և արյունոտ մասերը բոլորին ցույց տալով՝ ասաց.

— Ահա, սա է հիմա մեր դրոշը:

Գիշերվա ժամը երկուսին ստուգում կատարեցին: Երեսունյոթ հոգի էին ողջ մնացել:

Անժուրան, որը գնացել էր հետախուզության, հայտնվեց:

— Փարիզի ողջ բանակը ոտքի է հանված,— ասաց նա,— մեկ ժամից մեզ վրա կգրոհեն: Ինչ վերաբերում է ժողովրդին, ապա նա երեկ հուզված էր, իսկ այս առավոտ տեղից չի շարժվում: Ոչ մի սպասելիք, ոչ մի հույս:

Բոլորը լռեցին: Մի պահ անբացատրելի լռություն տիրեց:

Սակայն դա շատ կարճ տևեց:

Ամենահեռավոր ծայրում գտնվող խմբերից ինչ-որ մեկը ձայն տվեց Անժուրային.

— Թող այդպես լինի: Բարիկադը քսան ոտնաչափ էլ բարձրացնենք և բոլորս այստեղ մնանք: Քաղաքացիներ, ցույց տանք, որ հանրապետականները ժողովրդին չեն լքում:

Այս խոսքերը դիմավորեցին խանդավառ բացականչություններով:

Լույսն արագ բացվում էր: Բայց ոչ մի պատուհան, ոչ մի դուռ չէր բացվում: Սեն-Դնի փողոցը լուռ էր: Խաչմերուկներում ոչ մի կենդանի շունչ չկար:

Ոչինչ չէր երևում, բայց լսվում էր: Որոշ հեռավորության վրա ինչ-որ խորհրդավոր շարժում էր տեղի ունենում: Ակնհայտ էր, որ ճգնաժամային պահը մոտենում էր:

Սպասումը երկար չտևեց: Մի թնդանոթ հայտնվեց:

Հրետանավորները հրում էին թնդանոթը: Երևում էր վառվող պատրույգի ծուխը:

— Կրա՛կ,— բղավեց Անժուրան:

Ամբողջ բարիկադը միանգամից կրակեց, համազարկը զարհուրելի էր: Ծուխը ծածկեց թնդանոթը և մարդկանց, սակայն մի քանի

վայրկյան հետո ծուխը ցրվեց, և թնդանոթն ու մարդիկ կրկին երևացին: Ոչ մեկը չէր վիրավորվել:

— Կեցցե՛ն թնդանոթաձիգները,— գոռաց Բոսյունեն:

IX

Մի րոպե անց փողոցի կենտրոնում կանգնած թնդանոթը պատրաստ էր կրակելու: Նրա ահեղ երախը նայում էր բարիկադին:

Ապստամբները լցնում էին հրացանները, իսկ հրետանավորները՝ թնդանոթը:

Հանկարծ մի կրակոց լսվեց:

— Այստե՛ղ եմ,— կանչեց մի զվարթ ձայն:

Եվ հենց այն պահին, երբ արկը դիպավ բարիկադին, Գավրոշը հայտնվեց բարիկադի ետևում:

— Այնուամենայնիվ, հարկավոր է կանխել երկրորդ հարվածը,— ասաց Անժոլրան:

Նա նշան բռնեց թնդանոթի հրամանատարի վրա և սեղմեց կարաբինի ձգանը: Հրետանավորը երկու անգամ պտտվեց ինքն իր շուրջը, ապա ընկավ թնդանոթի վրա և անշարժացավ: Գնդակը ծակել էր նրա կուրծքը: Հրետանավորը մեռած էր:

Հարկ եղավ նրան տանել և փոխարինել մեկ ուրիշով: Դա թույլ տվեց մի քանի րոպե շահել:

Կրակը վերսկսվեց: Հարկավոր էր անպայման այնպես անել, որ կրակոցները շուտ շավերեին բարիկադը: Ճեղքվածքի մեջ մի ներքնակ դրեցին:

Դրանից հետո սպասեցին արկի հարվածին: Հարվածը չուշացավ: Սակայն արկը մտավ ներքնակի մեջ: Բարիկադը փրկված էր:

— Նորն են բերում,— բղավեց Կուրֆեյրակը:

Եվ իսկապես, երկրորդ թնդանոթ էլ դրվեց:

Մի քանի վայրկյան անց երկու թնդանոթները միաժամանակ կրակում էին բարիկադի վրա:

— Անհրաժեշտ է անպայման նվազեցնել թնդանոթների պատճառած վնասները,— ասաց Անժուրան և բղավեց.— Կրակ հրետանավորների վրա:

Բարիկադը կրակ բացեց: Փողոցը լցվեց կուրացնող ծխով և մի քանի ընկած հետո կարելի էր նշմարել թնդանոթների անիվների մոտ ընկած հրետանավորների երկու երրորդին:

— Գործերը լավ են գնում,— ասաց Բոսյունեն Անժուրային:— Հաջողություն է:

Անժուրան շարժեց գլուխն ու պատասխանեց.

— Եվս քառորդ ժամվա այդպիսի հաջողություն և բարիկադում տասը փամփուշտ էլ չի մնա:

Գավրոշը լսեց այդ խոսքերը:

X

Հանկարծ Կուրֆելյրակը բարիկադի մյուս կողմում, գնդակների տարափի տակ մի մարդ տեսավ:

Գավրոշը գինետնից շշերի մի զամբյուղ էր վերցրել, դուրս էր եկել բարիկադի անցքից և անխռով զբաղված էր ազգային գվարդիայի սպանված զինվորների լիքը փամփուշտակալները իր զամբյուղի մեջ դատարկելով:

— Ի՞նչ ես անում այդտեղ,— հարցրեց Կուրֆելյրակը:

Գավրոշը գլուխը վեր բարձրացրեց:

— Քաղաքացի, զամբյուղս եմ լցնում:

— Իսկ ի՞նչ է, գնդակները չե՞ս տեսնում:

Գավրոշը պատասխանեց.

— Անձրևի պես թափվում են, հետո ինչ:

Կուրֆեյրակը բղավեց.

— Ե՛տ դարձիր:

— Իսկո՛ւյն,— պատասխանեց Գավրոշը և մի ոստյունով թռավ փողոց:

Մոտավորապես քսան մարդ այս ու այնտեղ փռվել էին սալահատակի վրա: Գավրոշի համար նրանք քսան փամփշտակալներ էին: Բարիկադի համար դա փամփուշտի պաշար էր:

Ծուխը մշուշի պես պատել էր փողոցը:

Գավրոշի համար այդ ծուխն օգտակար եղավ:

Ծխի այդ քողի ներքո և իր փոքրուկյան շնորհիվ Գավրոշն աննկատ կարողացավ փողոցով բավական առաջ գնալ: Նա առանց մեծ վտանգի ենթարկվելու դատարկեց առաջին յոթ-ութ փամփշտակալները:

Նա սողում էր, զամբյուղն ատամներով բռնած չորեքթաթ վազում, սահում մի սպանվածից մյուսը և ընկույզ մաքրող կապիկի նման դատարկում տուփերն ու փամփշտակալները:

Բարիկադից, որին Գավրոշը դեռ բավական մոտ էր, չէին համարձակվում նրան ետ կանչել՝ վախենալով զինվորների ուշադրությունը նրա վրա գրավելուց:

XI

Հազիվ առաջ գնալով, Գավրոշը հասավ այն կետին, որտեղ արդեն հրացանաձգության ծուխը չէր հասնում:

Հրաձիգներն սկսեցին միմյանց ցույց տալ ծխի մեջ շարժվող ինչ-որ բան:

Այն պահին, երբ Գավրոշը սահմանաքարի մոտ ընկած մի սերժանտի ազատում էր փամփուշտներից, մի գնդակ դիպավ

դիակին:

— Վա՛յ ես ձեր,— ասաց Գավրոշը:— Ահա թե ինչպես եք սպանում իմ մեռելներին:

Երկրորդ գնդակը դիպավ նրա կողքի սալաքարին: Երրորդը՝ շրջեց զամբյուղը:

Գավրոշը նայեց, կանգնեց ուղիղ, մազերը քամուն, ձեռքերն ազդրերին դրած, աչքերը սևեռած ազգային գվարդիայի զինվորների կողմը, որոնք կրակում էին, և սկսեց երգել.

Քաղաքացիք Նանտերի,
Տգեղ են մեղքով Վոլտերի,
Բնակիչները Պլեգոյի,
Ապուշ են մեղքով Ռուսոյի:

Հետո նա վերցրեց զամբյուղը, նորից մեջը լցրեց թափված փամփուշտները, առանց մեկն իսկ թողնելու, և առաջանալով դեպի հրացանաձգությունը, գնաց դատարկելու մի ուրիշ փամփուշտակալ: Այստեղ վրիպեց չորրորդ գնդակը: Գավրոշը երգեց.

Նման չեմ ես նոտարի,
Դա հանցանքն է Վոլտերի,
Ես թոչնակ եմ հուսով լի,
Դա հանցանքն է Ռուսոյի:

Հինգերորդ գնդակը նույնպես չդիպավ Գավրոշին, և նա երգեց երրորդ քառյակը.

Զվարթ եմ ես ու բարի,
Դա մեղքով է Վոլտերի,
Աղֆատ եմ ու կենսալի,
Դա հանցանքն է Ռուսոյի:

Պատկերն ահավոր էր ու սքանչելի: Գնդակոծվող Գավրոշը ծաղրում էր գնդակոծողներին: Թվում էր, թե նա զվարճանում է: Ամեն համազարկի նա պատասխանում էր մի քառյակով: Անընդհատ նշան

էին բռնում նրա վրա և անընդհատ վրիպում:



Ազգային գվարդիականներն ու զինվորները ծիծաղում էին և նրա վրա նշան բռնում: Գավրոշը պառկում էր, նորից կանգնում, թաքնվում ինչ-որ դռան ետևում, անհետանում, կրկին հայտնվում, փախչում, վերադառնում, հրետանավորներին պատասխանում քիթ ցույց տալով, և միևնույն ժամանակ փամփուշտներ հավաքում, դատարկում տուփերը և լցնում զամբյուղի մեջ:

Բարիկազը դողում էր, իսկ նա երգում էր: Գնդակները սլանում էին նրա ետևից, սակայն Գավրոշը նրանցից արագավազ էր: Նա կարծես մահվան հետ ինչ-որ զարհուրելի պահմտոցի էր խաղում:

Սակայն մի գնդակ կպավ կրակի կտոր այդ տղային: Գավրոշն օրորվեց և ընկավ: Ամբողջ բարիկազը մի ճիչ արձակեց: Սակայն Գավրոշն ընկել էր, որպեսզի կրկին ելներ: Նա սովորական ձևով նստեց: Արյան շիթ էր հոսում նրա դեմքի վրայով: Նա ձեռքերը բարձրացրեց վեր, նայեց այն կողմը, որտեղից եկել էր հարվածը և սկսեց երգել.

*Ես ընկել եմ գետնին,
Դա հանցանքն է Վոլտերի,
Քիթս մտել է առվի մեջ,
Դա հանցանքն է...*

Նա չկարողացավ վերջացնել: Նույն հրաձիգի երկրորդ գնդակը ընդհատեց երգը:

Այս անգամ նա բերանքսիվայր ընկավ սալահատակի վրա և այլևս չշարժվեց:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- [1](#) Փարիզի բանվորական թաղամասում գտնվող ծառուղի:
- [2](#) Նույն ծառուղում գտնվող մեծ շատրվան:
- [3](#) Բանտ Փարիզում, որը գոյություն է ունեցել մինչև 1850թ.:
- [4](#) Կանանց համար նախատեսված բանտ Փարիզում:
- [5](#) Բանտ Փարիզում, որը գոյություն է ունեցել մինչև 1886թ.:
- [6](#) Ֆրանսիական մանր դրամ:
- [7](#) Միապետական Ֆրանսիայի քաղաքական բանտ, որը 1789թ. հուլիսի 14-ի հեղափոխության ժամանակ քարուքանդ արվեց:
- [8](#) Մանր դրամ:
- [9](#) Փետրափնջով զարդարված գլխարկի տեսակ: Այդպիսի գլխարկներ կրում էին Ֆրանսիական ազգային գվարդիայի զինվորները:
- [10](#) Ֆրանսիացի մարշալ, որ 1830թ. անցավ միապետության կողմը և դաժանությամբ ճնշելով ապստամբությունը, արթնացրեց ժողովրդի ատելությունը:

Վիկտոր Հյուզո

Գավրոշ
սատմվածք

Հատված «Թշվառներ» վեպից



ՅԱՐՈՂՐԱՏ

Երևան — 2014